ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 773-Ա

«02» դեկտեմբերի 2024թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 13-ի N 878-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 2-րդ և 7-րդ կետերի պահանջները

որոշում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի փորձագետի կողմից իրականացվող աշխատանքային ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

ք. Գավառ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2024 թ. դեկտեմբերի 02 -ի
713 -Ա որոշման

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի փորձագետի

1. Ներգրավման դեպքը և հիմնավորումները

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի /այսուհետ՝ Աշխատակազմ/ իրավաբանական բաժնին է վերապահված՝

1. Աշխատակազմում նախապատրաստվող իրավական փաստաթղթերի ձևակերպումը Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ու իրավական ակտերի պահանջներին համապատասխանության իրականացումը.
2. Դատական ատյաններում Աշխատակազմի շահերի պաշտպանության իրականացումը.
3. Մարզային ենթակայության կազմակերպությունների ղեկավարների կողմից ընդունված իրավական ակտերի ուսումնասիրման գործընթացի իրականացումը.
4. համայնքների ղեկավարների սեփական և պետության պատվիրակված լիազորությունների և համայնքի ավագանու լիազորությունների նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության իրականացումը.
5. Իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթերի նախապատրաստումը.
6. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու, գործընթացին մասնակցությունը.
7. Աշխատակազմի կողմից իրականացվող վարչական վարույթի գործընթացին մասնակցությունը.
8. Գլխավոր քարտուղարի հրամանների և Մարզպետի որոշումների նախագծերի նախապատրաստման աշխատանքների իրականացումը.
9. Քաղաքացիներից ստացված դիմումների, բողոքների և առաջարկությունների քննարկմանը մասնակցությունը.
10. Աշխատակազմի իրավասության շրջանակներում հակակոռուպցիոն միջոցառումների և Աշխատակազմի կողմից հակակոռուպցիոն ոլորտի

ղեկավարին է ներկայացնում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն:

5. Աշխատանքների գնահատման չափանիշները՝

Փորձագետի աշխատանքների գնահատման համար հիմք է հանդիսանում վերջինիս կողմից ներկայացված հաշվետվությունները: Կատարված աշխատանքի արդյունքը գնահատվում է բավարար, լավ կամ գերազանց:

6.Փորձագետին ներկայացվող պահանջները՝

Սույն ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման համար փորձագետը պետք է ունենա՝

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն,
- իրավագիտություն մասնագիտությամբ բարձրագույն կրթություն,
- հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ առնվազն մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ,
- հայերենի, ռուսերենի, անգլերենի գերազանց իմացություն,
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Ստորագրող
ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
2201650098

2024-12-02 18:21:48 GMT+4
Հավաստված է EKENG-ի կողմից

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ս. ՄԱՆՈՒԿՅԱՆ